**Հավելված 6**
**«ՎՊՊ-ԳՀԱՊՁԲ-21/1-2»* ծածկագրով**
**գնանշման հարցման մրցույթի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ/ԴԵՂԱՏՆԱՅԻՆ/ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՎՊԴԳՀ ԱՊՁԲ-21/1-2

ք. Վանաձոր «12» հունվարի 2021թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ Պ ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Ս.Բալայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ___5___ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 13 898 171,00 /տասներեք միլիոն ութ հարյուր իննսունութ հազար մեկ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18]291Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ԳՆՈՐԴ |
|---|---|
| «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՈԲԸ | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ |
| Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 | ք. Երևան, Շիրակի 1/68 |
| <Ինեկոբանկ>Վանաձոր մ/ղ | ԷՎՈԿԱԲԱՆԿ |
| Հ/Հ 20502230004510 01 | Հ/Հ 16600-05218060100 |
| ՀՎՀՀ 06907013 | ՀՎՀՀ 05507136 |
| Տնօրեն՝ Ս. Բալայան | Հեռ. 060 700-500 |
| _____ Կ.Տ | էլ. հասցե՝ tender@alfapharm.am |
| ստորագրություն | _____ |
| | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Հավելված*
*«12» հունվարի 2021թ. կնքված*
ՎՊ-ԳՀԱՊՁԲ-21/1-2 *ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33651125 | Ազիթրոմիցին | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 500մգ | դեղապատիճ | 438,67 | 219 333,33 | 500 | Ք. Վանաձոր, դեղատուն | 500 | Հուն.նվար-դեկտեմբերի 25 |
| 3 | 33621290 | Ադրենալին | Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ | Ադրենալին 0.1% լուծույթ | ամպուլա | 290,80 | 2 908,00 | 10 | Ք. Վանաձոր, դեղատուն | 10 | Հուն.նվար-դեկտեմբերի 25 |
| 6 | 33651112 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու | ՍմիթԿլայն Բիչեմ Լիմիտեդ | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate) դեղահատ 500մգ+125մգ | դեղահատ | 103,43 | 620 571,43 | 6000 | Ք. Վանաձոր, դեղատուն | 6000 | Հուն.նվար-դեկտեմբերի 25 |
| 8 | 33651112 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու | Լեկ դ.դ | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate) դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի | 22հիկ | 859,00 | 51 540,00 | 60 | Ք. Վանաձոր, դեղատուն | 60 | Հուն.նվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 125մգ/5մլ+31,25մգ/5մլ | | | | | | | |
| 10 | 33661127 | Մետամիոդոլ նատրի | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ | Մետամիոդոլ նատրի 50% - 2 մլ | ամպուլա | 38,30 | 957,50 | 25 | Ք Վանաձոր, դեղատուն | 25 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 14 | 33631180 | Արծաթի սուլֆադիազին | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ | Արծաթի սուլֆադիազին silver sulfadiazine նրբաքսուկ արտաքին կիրառման 10մգ/գ, ալյումինե պարկուճ | հատ | 2 094,00 | 125 640,00 | 60 | Ք Վանաձոր, դեղատուն | 60 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 15 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու | Գ.Լ. Ֆարմա ԳմբՀ ացետիլսալիցիլաթթու դեղահատեր աղելույծ թաղանթապատ | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ թաղանթապատ, աղելույծ 100մգ | դեղահատ | 11,77 | 82 390,00 | 7000 | Ք Վանաձոր, դեղատուն | 7000 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 16 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու | Տակեդա ԳմբՀ ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ դեղահատեր | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ թաղանթապատ, աղելույծ 150մգ | դեղահատ | 33,17 | 99 510,00 | 3000 | Ք Վանաձոր, դեղատուն | 3000 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 17 | 33661121 | Ացետիլցիստեին | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ | Ացետիլցիստեին դեղահատեր դյուրալույծ 200մգ | դեղահատ | 100,30 | 100 300,00 | 1000 | Ք Վանաձոր, դեղատուն | 1000 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 18 | 33661121 | Ացետիլցիստեին | ամբոն Սուիտզերլանդ ՍՊԸ | Ացետիլցիստեին դեղաիատեր դյուրալույծ 600մգ | դեղահատ | 241,10 | 265 210,00 | 1100 | Ք Վանաձոր, դեղատուն | 1100 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 19 | 33651170 | Ացիկլովիր | Ակրիխին ԲԸ | Ացիկլովիր, acyclovir դեղահատ 200մգ | դեղահատ | 23,00 | 4 600,00 | 200 | Ք Վանաձոր, դեղատուն | 200 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 20 | 33651170 | Ացիկլովիր | Ակրիխին ԲԸ | ացիկլովիր դեղահատ400մգ | դեղահատ | 49,00 | 14 700,00 | 300 | Ք Վանաձոր, դեղատուն | 300 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 22 | 33631210 | Բետամեթազոն | Արփիմեդ ՍՊԸ բետամեթազոն | Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) betamethasone (betamethasone valerate) քսուք արտաքին կիրառման 1մգ/գ, ալյումինե պարկուճ | պարկուճ | 903,00 | 36 120,00 | 40 | Ք Վանաձոր, դեղատուն | 40 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 25 | 33651145 | Դեքսամեթազոն | Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ. | Դեքսամեթազոն, dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ, սրվակ | հատ | 568,00 | 17 040,00 | 30 | Ք Վանաձոր, դեղատուն | 30 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |
| 26 | 33651145 | Դեքսամեթազոն | ԿՌԿԱ դ.դ. | Դեքսամեթազոն (դեքսամեթազոնի նատրիումական ֆոսֆատ) dexamethasone (dexamethasone sodium phosphate) լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ ամպուլա | հատ | 77,20 | 3 088,00 | 40 | Ք Վանաձոր, դեղատուն | 40 | Հուլ նվազ-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 33631310 | Դիկլոֆենակ | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium) դոնդող արտաքին կիրառման 50մգ/գ, ալյումինե պարկուճ | պարկուճ | 1 588,00 | 1 588 000,00 | 1000 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 1000 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 29 | 33631310 | Դիկլոֆենակ | Հեմոֆարմ Ա.Դ. | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium) դեղահատ 100մգ | դեղահատ | 17,83 | 107 000,00 | 6000 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 6000 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 31 | 33671130 | Դիֆենհիդրամին | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride) լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլաներ | ամպուլա | 25,50 | 510,00 | 20 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 20 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 32 | 33691176 | Էթանոլ | Արսանիտ ՍՊԸ | Բժշկական սպիրտ 96%, 22իկ 1 լ | հատ | 1 358,00 | 203 700,00 | 150 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 150 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 33 | 33621520 | Էնալապրիլ 10մգ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) enalapril (enalapril maleate) դեղահատ 10մգ | դեղահատ | 5,85 | 29 250,00 | 5000 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 5000 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 35 | 33621520 | Էնալապրիլ H | Արփիմեդ ՍՊԸ | Էնալապրիլ+ հիդրոքլորթիազիդ 10մգ+25մգ | դեղահատ | 19,85 | 101 235,00 | 5100 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 5100 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 36 | 33621520 | Էնալապրիլ H | Արտեսան Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ | Էնալապրիլ+ հիդրոքլորթիազիդ 20մգ+12.5մգ | դեղահատ | 86,63 | 450 493,33 | 5200 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 5200 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 37 | 33661156 | Թիմոլոլ | Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ. | Թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) timolol (timolol maleate) ակնակաթիլներ 5մգ/մլ, ֆլ | հատ | 453,00 | 18 120,00 | 40 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 40 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 39 | 33631290 | Իբուպրոֆեն | Ալկալա Ֆարմա. Ս.Լ. | Իբուպրոֆեն ներքին ընդունման լուծույթ200մգ/5մլ | 22իկ | 2 473,00 | 49 460,00 | 20 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 20 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 40 | 33661116 | Լիդոկային | Լիկվոր ՓԲԸ | Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 20մլ ապակե սրվակ | սրվակ | 25,50 | 1 275,00 | 50 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 50 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 41 | 33671131 | Լորատադին | Արփիմեդ ՍՊԸ | Լորատադին, Loratadine դեղահատ 10մգ | դեղահատ | 23,20 | 34 800,00 | 1500 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 1500 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 45 | 33642230 | Էութիրոքս | Մերկ ԿԳաԱ | լևոթիրոքսին նատրիում 100 մկգ | դեղահատ | 12,39 | 148 680,00 | 12000 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 12000 | Յու.Նվեր-դեկտեմբերի 25 |
| 46 | 33661128 | Կարբամազեպին | Արփիմեդ ՍՊԸ | Կարբամազեպին, | դեղահատ | 11,90 | 59 500,00 | 5000 | Ք. Վանաձոր, Ողջաբերդ | 5000 | Յու.Նվեր-դեկտեմբերի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | carbamazepine դեղահատ 200մգ, | տ | | | | | | 25 |
| 48 | 33621530 | Կոպրենեսա | ԿՌԿԱ դ.դ. | Պերինդոպրիլ /ինդոպամիդ 8մգ/2.5մգ | դեղահատ | 109,63 | 548 166,67 | 5000 | Ք Վանսոր, դեղատուն | 5000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 49 | 33621510 | Կապտոպրիլ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | Կապտոպրիլ 25մգ | դեղահատ | 3,83 | 34 425,00 | 9000 | Ք Վանսոր, դեղատուն | 9000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 51 | 33671135 | Կալցիումի քլորիդ | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ | կալցիումի քլիրիդ 10% 10ml | ամպուլա | 81,90 | 1 228,50 | 15 | Ք Վանսոր, դեղատուն | 15 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 52 | 33631282 | Ջրածնի պերօքսիդ | "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ | Ջրածնի պերօքսիդ 3 % /100 ml/ | շշիկ | 155,00 | 15 500,00 | 100 | Ք Վանսոր, դեղատուն | 100 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 55 | 33691136 | Նատրիումի քլորիդ | "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 5մլ ամպուլաՆատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման | ամպուլա | 36,60 | 732,00 | 20 | Ք Վանսոր, դեղատուն | 20 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 56 | 33611100 | Օմեպրազոլ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | Օմեպրազոլ omeprazole, դեղապատիճ դանդաղ ձերբազատմամբ 20մգ | դեղահատ | 12,13 | 266 933,33 | 22000 | Ք Վանսոր, դեղատուն | 22000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 57 | 33661122 | Պարացետամոլ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | Պարացետամոլ, Paracetamol, դեղահատ դյուրալույծ 500 մգ | դեղահատ | 5,80 | 2 900,00 | 500 | Ք Վանսոր, դեղատուն | 500 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 58 | 33661122 | Պարացետամոլ | Նիժֆարմ ԲԸ | պարացետամոլ, Paracetamol, մոմիկներ ուղիղաղիքային 50մգ | մոմիկ | 33,30 | 1 998,00 | 60 | Ք Վանսոր, դեղատուն | 60 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 60 | 33661122 | Պարացետամոլ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | պարացետամոլ, Paracetamol, մոմիկներ ուղիղաղիքային 150մգ | մոմիկ | 54,60 | 10 920,00 | 200 | Ք Վանսոր, դեղատուն | 200 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 61 | 33621480 | Պերինդոպրիլ | Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի | պերինդոպրիլ 5մգ | դեղահատ | 88,73 | 2 662 000,00 | 30000 | Ք Վանսոր, դեղատուն | 30000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 62 | 33691186 | պիրացետամ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | պիրացետամ400մգ | դեղահատ | 11,40 | 30 780,00 | 2700 | Ք Վանսոր, դեղատուն | 2700 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 64 | 33691176 | Քլորոպիրամինի հիդրոքլորիդ 2% | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ | Քլորոպիրամինի հիդրոքլորիդ 2 % լուծույթ | ամպուլա | 291,60 | 5 832,00 | 20 | Ք Վանսոր, դեղատուն | 20 | Հու նվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 67 | 33621110 | Վարֆարին | Օրիոն Քորպորեյշն | Վարֆարին (վարֆարին նատրիում) warfarin (warfarin sodium), դեղահատ, 5մգ | դեղահատ | 31,68 | 110 880,00 | 3500 | Ք Վանսոր, դեղատուն | 3500 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 68 | 33621730 | Վերապամիլ | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) դեղահատեր | Վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) verapamil (verapamil hydrochloride) դեղահատ թաղանթապատ 40մգ | դեղահատ | 14,67 | 29 333,33 | 2000 | Ք Վանսոր, դեղատուն | 2000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 69 | 33621730 | Վերապամիլ | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) դեղահատեր | Վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) verapamil (verapamil hydrochloride) դեղահատ թաղանթապատ 80մգ | դեղահատ | 20,93 | 31 400,00 | 1500 | Ք Վանսոր, դեղատուն | 1500 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 71 | 33611190 | Աճալ | Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ | Աճալ 70մգ | հատ | 12,50 | 62 500,00 | 5000 | Ք Վանսոր, դեղատուն | 5000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 73 | 33691124 | Պիրանտել | ԻՆՆՈՏԵՐԱ ՇՈՒԶԻ ռուե Ռեեե Շանտերո | Պիրանտել (պիրանտելի էմբոնատ) pyrantel (pyrantel embonate) դեղակախույթ ներքին ընդունման ,, 22հկ 125մգ/2,5 մլ | հատ | 1 495,00 | 299 000,00 | 200 | Ք Վանսոր, դեղատուն | 200 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 74 | 33631230 | Պովիդոն յոդ | Ալֆա-Ֆարմ ՓԲԸ | Պովիդոն յոդ povidone-iodine լուծույթ արտաքին կիրառման 100մգ/մլ-1լիտր | հատ | 4 500,00 | 45 000,00 | 10 | Ք Վանսոր, դեղատուն | 10 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 76 | 33661154 | Տետրակային | Լիկվոր ՓԲԸ | Տետրակային հիդրոքլորիդ աչքի կաթիլներ 1%- 10 մլ | հատ | 2 298,00 | 57 450,00 | 25 | Ք Վանսոր, դեղատուն | 25 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 77 | 33651115 | Ցեֆալեքսին | Հեմոֆարմ Ա.Դ., | Ցեֆալեքսին (ցեֆալեքսինի մոնոհիդրատ) cefalexin (cefalexin monohydrate) գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ, 22հկ | հատ | 778,00 | 23 340,00 | 30 | Ք Վանսոր, դեղատուն | 30 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 78 | 33651134 | Ցիպրոֆլոքսացին | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ | ցիպրոֆլոքսացին , դեղահատ 500 մգ | հատ | 36,80 | 36 800,00 | 1000 | Ք Վանսոր, դեղատուն | 1000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 79 | 33691176 | Ցիտերիզին | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ | Ցիտերիզին 10 մգ, դեղահատ | հատ | 76,07 | 38 033,33 | 500 | Ք Վանսոր, դեղատուն | 500 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 80 | 33691176 | Մոնտելուկաստ | Դենկ Ֆարմա Գմբհ և Քո. ԿԳ | մոնտելուկաստ (մոնտելուկաստի նատրիում) 10մգ | հատ | 240,67 | 48 133,33 | 200 | Ք Վանսոր, դեղատուն | 200 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 81 | 33691176 | Ցիտերիզին | Էգիս | լուծույթ ներքին ընդունման | հատ | 2 171,00 | 217 100,00 | 100 | Ք Վանսոր, | 100 | Հու նվար- |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ֆարմասյուտիկալս ՓԲԸ | 10մգ/մլ , սրվակ | | | | | դեղատուն | | դեկտեմբեր 25 |
| 82 | 33691176 | Ամոքսացիլին | Հեմոֆարմ Ա.Դ. | Ամոքսացիլին օշ.250մգ/5մլ 100մլ | հատ | 812,00 | 89 320,00 | 110 | Ք Վանսեոր, դեղատուն | 110 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 83 | 33691176 | Ֆերրոպոլ կաթիլներ | Մեդանա Ֆարմա ԲԸ | երկաթի (III) հիդրոքսիդդիպոլիմալտոզատ 50 մգ/մլ , կաթիլ ներքին ընդունման համար, շշիկ 30 մլ | հատ | 2 225,00 | 356 000,00 | 160 | Ք Վանսեոր, դեղատուն | 160 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 84 | 33621590 | Ֆուրասեմիդ | Արփիմեդ ՍՊԸ | Ֆուրասեմիդ 40մգ | հատ | 3,30 | 39 600,00 | 12000 | Ք Վանսեոր, դեղատուն | 12000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 85 | 33691192 | Լիդոկային | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ | լիդոկային ցողաշիթ, 10%- 38 գր. 650 դոզա | հատ | 3 099,00 | 3 099,00 | 1 | Ք Վանսեոր, դեղատուն | 1 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 87 | 33691270 | Սալմետերոլ + ֆլուտիկազոն | Գլաքսո Ուելքոմ Պրոդուկտիոն | Սալմետերոլ + ֆլուտիկազոն շնչառման, 25մկգ-125մկգ 120 դոզա | հատ | 15 789,00 | 315 780,00 | 20 | Ք Վանսեոր, դեղատուն | 20 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 88 | 33631380 | Տոլպերիզոնի հիդրոքլորիդ | Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ) դեղահատեր | Տոլպերիզոն 50մգ | հատ | 114,83 | 401 916,67 | 3500 | Ք Վանսեոր, դեղատուն | 3500 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 89 | 33621460 | Պերինդոպրիլ | Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին , դեղահատ, 5 մգ+5 մգ | հատ | 159,77 | 639 066,67 | 4000 | Ք Վանսեոր, դեղատուն | 4000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 90 | 33621460 | Պերինդոպրիլ | Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին , դեղահատ 5մգ, +10 մգ | հատ | 175,03 | 525 100,00 | 3000 | Ք Վանսեոր, դեղատուն | 3000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 91 | 33621460 | Պերինդոպրիլ | Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին , դեղահատ, 10 մգ +5 մգ | հատ | 186,40 | 372 800,00 | 2000 | Ք Վանսեոր, դեղատուն | 2000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 92 | 33621460 | Պերինդոպրիլ | Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին , դեղահատ, 10 մգ +10մգ | հատ | 199,70 | 1 198 200,00 | 6000 | Ք Վանսեոր, դեղատուն | 6000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 94 | 33621460 | Պերինդոպրիլ+ինդրապամիդ+ ամլոդիպին | ԿՌԿԱ դ.դ. | Պերինդոպրիլ+ինդրապամիդ+ ամլոդիպին, դեղահատ, 8մգ+10մգ+2,5մգ | հատ | 155,83 | 779 166,67 | 5000 | Ք Վանսեոր, դեղատուն | 5000 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 95 | 33671114 | Ամինոֆիլին | "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ | Ամինոֆիլին, Aminophylline 24մգ/մլ, լուծույթ ներարկման, 5մլ ամպուլա | հատ | 38,30 | 1 915,00 | 50 | Ք Վանսեոր, դեղատուն | 50 | Հու նվար-դեկտեմբերի 25 |
| 96 | 33651134 | Ցիպրոֆլոքսացին | Լիկվոր ՓԲԸ | ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն | հատ | 1 786,00 | 26 790,00 | 15 | Ք Վանսեոր, դեղատուն | 15 | Հու նվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ,10 մլ | | | | | | | |
| 97 | 33621720 | Բիսոպրոլոլ + Պերինդոպրիլ | Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի | Բիսոպրոլոլ + Պերինդոպրիլ /Bisoprolol+ Perindopril/ դեղահատ, 5 մգ + 5 մգ | հատ | 133,10 | 133 100,00 | 1000 | Ք. Վանաձոր, դեղատուն | 1000 | Հունվար-դեկտեմբերի 25 |

***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը**
**՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,**
**բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը**
**. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպառարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն հետևյալ հասցեում՝ ք.** Վանաձոր Գրիգոր Լուսավորիչ փ. 43-1/6-1

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*
**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

## ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17
<Ինեկոբանկ>Վանաձոր մ/ղ
հ/հ 2050223000451001
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Ս. Բալայան
_____ Կ.Տ
ստորագրություն

## ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
ԷՎՈԿԱԲԱՆԿ
Հ/Հ 16600-05218060100
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցեն՝ tender@alfapharm.am
_____
/ստորագրություն/
Կ.Տ